

Ճոխ է ամենէն աւելի կեդրոնական Ասիոյ ապրանքով, մանաւանդ կապերու և Պուխարայի պղնձի:

Թոթշիլտի հաշուետեղանէն (comptoire) մեր ունեցած յանձնարարականի մը շնորհիւ՝ կրցանք այցելութիւն ընել քանի մը գործարանաց և ամենէն աւելի հետաքննելի նաւթի հորերուն: Բայց երկրին այս հրաշալի հարստութենէն դուրս, կարծես թէ ամենայն ինչ կը միաբանի՝ քաղաքիս բնակութիւնը դժուարատար գործելու: Նուրը գէշ, ապրուստը թանկ, ու ձմեռն միայն անձրեւի երես կը տեսնեն: Բայց հարկ է խոստովանիլ որ այս ամենայն անպատեհութեամբքն ալ՝ Բաղուայ կլիմայն վատառողջ չէ: Միայն ամառը տիրող բարկ փոշոյն պատճառաւ՝ յաճախ է աչացաւը:

Պզտի շողենաւով մը՝ մէկ քանի բարեկամաց ընկերակցութեամբ, ծովուն վրայ գեղեցիկ շրջապայութենէ մը ետքը, յորում հողմոյն պատճառաւ անկարելի եղաւ կազը բռնկցընել և կրակէ ծովուն տեսարանը մեզ ընծայել, գիշերոյ հրաշալի պարզութեամբ վերադարձանք ի Բաղու, ուր գործատունք մինչեւ հեռու տեղուանք կը տարածէին իրենց ելեկտրական կրակի լուսաւորութիւնը:

Շարունակելի

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿՂՁԻՔ

ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ ԾՈՎԱԿՆԵՐՈՒ ՄԷՁ

Երեսունէ մինչև քառասուն վերսդ հաւասար ուղղութեամբ հեռու է Կարսէն, Արտահանէն և Ախալքալաքէն 6522 (անգղիական կամ ուսւ) ոտք բարձրութեամբ ծովու երեսէ վեր, և շրջապատեալ 9000 ոտք բարձր լեռներէն, 75 քառակուսի վերսդ տարածութիւն ունեցող Չըլաբը ծովակը: Տոկգոր Պանդեուքոֆ (Pantjukoff) նոր և հետաքրքրական գիւտ մ'ըրաւ այս և ասոր քով գլուտնուող ծովակին վրայ: Այս ծովակին հիւսիսային կողմը գտաւ ձուածն կղզի մի, որ 400 — 500 ոտք եզերքէն հեռի է: Կղզւոյն շրջապատը գրեթէ 200 ոտք է: Գետինն բաղկացեալ է ամեն տեսակ քարերէ: Ծովակին յատակը շատ խոր չէ, այլ իրբեւ 15 — 20 ոտք: Կղզին մարդկային ձեռակերտ է, և անտարակոյս մարդու բնակարան կամ ապաստանարան եղած: Ասոր շրջակայ բոլորտիքը ամենևին անփայտ է, և միշտ ալ այսպէս եղած է, ուստի կարելի չէր հօս իրեն ցցաբնակութիւն չինել, ինչպէս ուրիշ տեղ ըրած է, նաեւ ի Կովկաս (ըստ Հիպպոկրատեայ՝ Յաղագս Օդոյ, Ջրոյ և Տեղեաց, ԺԵ.) և արհեստական կղզիներ չինել է: Վերոյիշեալ

կղզին առաջուց զգալի կերպով աւելի ընդարձակ էր, և ծովու երեսէն շատ աւելի բարձր՝ քան այժմեան վիճակին մէջ։ Մ'արդ-կանցմէ երեսի վրայ թողուած և քանդիչ հեղեղներու տարե-րաց փնասուց ենթակայ, երթալով օրէ օր կը փոքրկանայ, և քա-րերն անգամ ջրոյ մէջ հետզհետէ կ'անհետանան։ Այս կղզւոյն մէջ անթիւ բազմութիւն թռչնոց կը գտնուի, որոնց կուով թանձր ծածկուած է։

Զրլտըր ծովակէն ոչ այնքան հեռի (10 վերսդ), կը գտնուի խօ-սաբին մեծ լիճը, որոյ տարածութիւնն է 25 քառակուսի վերսդ․ արեւելեան կողմը շղթայակալ լեռանց հետ միացած է։ Այլ շատ զարմանալի է, որ բնաւ կենդանի էակի նշան չունի և մէջը թռ-ղուած ձկներն անգամ արագ անհետացան։ Այս կղզւոյս հիւսի-սային կողմը՝ ուր ջուրն աւելի խոր է, գրեթէ 10 ձուածե արհես-տական կղզիք կան, որք հազիւ ջրոյ երեսը կ'երևին, և դալարով ծածկուած են։ Այս կղզեաց ժողովն ալ նոյնպէս ջրաբնակ մարդ-կան բնակելու ծառայած է։ Հիմա բազմութիւն բազից կը գրտ-նուի անդ․ և անոնց հաւկիթներն շրջաբնակ Հայք կը ժողովեն, վասն զի Տաճիկք չեն դաշիր անոնց, և բնաւ չեն ջնջուիր, վասն զի ինչպէս ծանօթ է, շատ բազմութեամբ հաւկիթ կ'ածեն, (իւրաքանչիւրն մինչև 30 հատ)․ և հետզհետէ առնուածներուն տեղ նոր կը հասցընեն։

Յ՝ Աւսլանտ Շաբաթաթերէէ

ՓՈՔՐԻԿ ՍԱՎՈՅՍՅԻՆ

Այ խեղճ տըղայ, ել և գընա փրանկիա,
Ի՞նչ օգուտ սէրս, երբոր աղքատ մնացի ես,
Երջանկութիւն հեռու տեղ է, հոս՝ վիշտ կայ.
Գընա տըղաս, բաղդըդ անշուշտ կը շինես։

Քանի որ կաթս քեզ կը լինէր բաւական,
Քանի որ ես կարող էի աշխատել,
Քու մի ժըպիտդ մօրըդ էր բաղդ անասման.
Որ չէր կարող ինձ այն առենը ասել.
« Մի՛ համբուրել այդ քոյ սիրուն երեխայն »։

Արդ՝ ես այրի․ դժս, շէնութիւնըս կորան.
Հիւանդ, տըխուր՝ որոյ դիմեմ ես պիտի